ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2024 թվականի N 154 - Ա

«ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԱՀԻՏ ԱԹԱՆԵՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 226-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի՝ 2024 թվականի ապրիլի 5-ի N 172-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում կազմված հաշվետվությունը և 2024 թվականի ապրիլի 22-ին «Քարահունջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Անահիտ Աթանեսյանի գրավոր բացատրությունը.

ո ր ո շ ու մ ե մ.

«Քարահունջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ սահմանված և տնօրենի պաշտոնակատարին վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար «Քարահունջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Անահիտ Աթանեսյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2024-04-30 11:56:30 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**